ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Լրագիրս ծնունդ կ՚առնէ մեծապատիւ յայտարարութենէն տպել զայն ամեն շաբաթ 4 տարի հնգաւ 1 խումն տրծմբ:

Հրատարակվածք լրագրի, ի ի ինչ: Տարեկան բաժանորդագրութեան գինն է 6 ռուբլի:

ՀԱՏՈՐ: ՆՈՅԵՄԲԵՐԻ 30. 1863 ԱՄԻ №42.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նապոլէոն կայսեր նամակը թագաւորներին եւ ազատ քաղաքներին, որոնք կազմում են Գերմանիայի դաշնակցութիւնը:

«L'Europe» լրագիրը տպել էր բնագիրը այն նամակի, որով Նապոլէոն կայսրը ուղղել էր Ֆրանկֆուրտի ժողովին:

Ա.հա այն.

Բարձրագոյն եւ անուանի թագաւորներ եւ ազատ քաղաքներ, որոնք կազմում էք Գերմանիայի փառաւոր դաշնակցութիւնը.

Տեսնելով այն դէպքերը, որոնք օրից օր ծագում են եւ ղօրանում, ես համարում եմ անհրաժեշտ հարկաւոր յայտնելու եմ միաքս բացայայտաբար թագաւորներին, որոնց ձեռքումն է ազգերի բաղդը:

«Ա.մէն անգամ, երբ խորին յուզմունքներ խախտում էին թագաւորութեանց հիմքը եւ փոփոխում էին նոյա սահմանները, լինում էին հանդիսաւոր քանակցութիւններ, նոր տարրները որոշելու համար եւ քննութեամբ նոր փոփոխութիւնները սրբագործելու համար: Ա.յս էր վեստֆալիայի դաշնադրութեան ա-ռարկան եօթն եւ տասներորդ դարու մէջ եւ վիեննայի դաշնադրութեանը 1815-ին: Ա.յս վերջին դաշնադրութեանը հիման վերայ է կանգնած Եւրոպայի այժմեան քաղաքական շինուածը: Բայց ձեզ անյայտ չէ այն էլ, որ նա ամէն կողմից քանդվում է:

Եթէ ուշադրութեամբ քննելու լինենք զանազան երկիրների դրութիւնը, չէ կարելի չխոստովանել, որ վիեննայի դաշնադրութեան դրեթէ ամէն կէտերը ջնջված են, փոփոխած, չընդունած եւ ենթարկվում են վտանգների: Սրանից ծագեցան անորոշ պարտաւորութիւններ, իրաւունքներ, որոնք զբաղմունք են իրաւական հմտութեան եւ անսահման պահանջմունքներ: Նա մանաւանդ այս երկիւղալի է, որ կատարելագործութիւնները, որոնք յառաջացան լուսաւորութիւնից, որ կապկց ազգերը միմեանց հետ նիւթական օգտի համար կապերով, կ՚անեն պատերազմը աւելի եւս արիւնհեղ եւ մարդածախ:

Ա.հա այս է քննութեանց եւ ընտրութեանց առարկան: Բանը վճռելու համար չպէտք է սպասենք, որ յանկարծական եւ անյաղթելի դէպքերը տատանեն մեր դատողութիւնները եւ ակամայ տանեն մեզ ամենևին դէպի հակառակ կողմը:

Ուսոյն եւ առաջարկում եմ ձեզ, բարեկարգել ներկան եւ ապահովել ապագան դեսպանաժողովի միջոցով:

«Ա.մենից աւելի ինձ է անհրաժեշտ թագաւորների իրաւունքները եւ ազգերի իրաւացի ցանկութիւնները, ինձ, որոնց նախանձառութեան կոչումը եւ Ֆրանսիացւոց ազգի կամքովը դահը բարձրացել եմ եւ որ կրթվել եմ թշուառութեանց դպրոցում: Ա.յս պատճառով ես պատրաստ եմ, առանց նախապատրաստած ձևի, ներս բերել ազգերի խորհրդոյ մէջ չափաւորութեան եւ արդարութեան ոգին, որոնք է մեան եւ բաժին այն մարդոց, որոնք ենթարկվել են այնքան բաղմատեսակ փորձառութեանց:

Եթէ ես անում եմ այսպիսի առաջարկութեան սկզբնաւորութիւնը, սորա պատճառը փառասիրութեան

զրգռմանը հետևելս չէ, այլ որովհետև ես եմ այն թագաւորը, որին վերաբերում են աւելի փառասիրական նախագիծներ, ես կամենում եմ այս սրտաբուխ և արդարամիտ վարմունքովս պարզապէս ապացուցանել, որ իմ միակ նպատակս է Եւրոպայի խաղաղութիւնը և հանդստութիւնը, առանց յուզմունքների և վրդովմունքների: Եթէ առաջարկութիւնս կ'ընդունվի, ես խնդրում եմ ձեզնից, որ նորա հետ միասին ընդունէք և փարիզը ժողովատեղի ձեզ համար:

Եթէ գերմանական դաշնակցութեան անդամ եղող և Ֆրանսիային բարեկամ թագաւորները պատշաճ կը համարեն իրանց ներկայութեամբ բարձրացնել ժողովի նշանակութիւնը, ես այս դէպքը պարծանք կ'համարեմ ինձ համար, որ պէտք է կարողանամ անել նրանց իմ մտերիմ հիւրընկալութիւնս:

Գուցէ Եւրոպան մի կերպովիկ օգտաւէտ համարէ, որ այն մայրաքաղաքը, որից շատ անգամ արվել է նշան վրդովմանց և աւերմանց համար, կ'դառնայ ժողովի տեղ, որնոր պէտք է ընդհանուր խաղաղութեան հիմունքները որոշէ:

Բաղդաւոր միջոց եմ համարում այս դէպքը կրկնելու համար դէպի ձեր դաշնակցութեան երկիրների բարօրութիւնը ունեցած մտերմութեանս և համակրութեանս հաւաստիքը:

Սրանից յետ, ով բարձրադոյն և պայծառափայլ թագաւորնե՛ր և ազատ քաղաքնե՛ր, որ կազմում էք Գերմանիայի անուանի դաշնակցութիւնը, աղօթում եմ Աստծուն, որ նա պահէ ձեզ իր սուրբ և արժանաւոր հովանաւորութեան տակ:

Փարիզ 1863 թուականի նոյեմբ. 4-ին: Նապոլէոն:
Դրուէն-դ-Լիւի:

«Լորդ Պալմերստոնը» Անգլիայի քաղաքականութեանը վերայ Լնհաստանի խնդրի մէջ:

Ահա քաղուածքը այն ճառից, որնոր ասաց լորդ Պալմերստոնը ճաշի ժամանակ մի Լորդի մօտ:

Մի քանի ընորհակալական խօսքերից յետ այն քաղցրը ընդունելութեան համար, որնոր նրան արին, ազնիւ առաջին նախարարը անցաւ այն օգուտներին, որնոր ծագում են մտքերի հաղորդակցութիւններից քաղաքական գործոց վերայ, հանդիսաւոր ճաշկերոյթներում: Եղել են այնպիսի պատահմունքներ, ասաց հռետորը, որ այսպիսի հանդիսաւոր ճաշկերոյթների ժամանակ քաղաքական դործքերի վերայ խօսողներին կարելի է եղել ընորհաւորելու լուսաւորեալ աշխարհի քաղաքական դրութիւնը: Վախենում եմ, որ չեմ կարող մի և նոյնը այժմ էլ անել, որովհետև, թէպէտ հորիզոնի վերայ չէ երևում մի այնպիսի ամպ, որնոր անդիջապէս սպառնում լինէր պատերազմական փոթորիկ, միայն էլի ամէն տեղ հեռաւոր արևմտքումը (Ամերիկաում) և հեռաւոր արևելքումը (Լհհաստանում) մենք տեսնում ենք տրխուր երևոյթներ, որոնց բնաւորութիւնը ստիպում է մեզ շատ ցաւելու այն երկիրների վերայ, որոնք նրանց ենթարկվածն են: (Լսեցի՛ք լսեցի՛ք) Հեռաւոր արևմտքումը մենք տեսնում ենք ազգ, որնոր ազգակից է մեզ խօսում է մի լեզուով, գաւանում է միևնոյն կրօնը և ունի միևնոյն զրականութիւնը մեզ հետ, տեսնում ենք այս ազգին, բաժանած երկու միմեանց թշնամի կողմեր, որոնք ներքին պատերազմում կորցնում են հարիւր հազար մարդիկ և մղում են այնպիսի պատերազմ, որի ոչ եղբը յառաջագոյն տեսնել կարելի է, և ոչ էլ վերջը գուշակել: (Լսեցի՛ք, լսեցի՛ք) Ջնայելով, որ ցաւում է իրերի այս վիճակի վերայ, Անգղեայի կառավարութիւնը էլի պարտք համարեց իրան չզլջանել ոչ մի կուսակցութեան խնդրքին և չպահեց նրանցից ոչ մէկի կողմը: (Հաւանութիւն) Մենք մեր պարտքը համարեցինք ամենևին մասնակից չլինելու այս թշուառ պատահարին: Եթէ մենք համոզված լինէինք, որ մենք կարող ենք վերջ տալ այն արիւնհեղութեան մեր բարեկամական միջնորդութեամբը, մենք բնաւ խնայելու չէինք մեր ճիգն ու աշխատանքը այնպիսի սուրբ նպատակի համար: (Լսեցի՛ք, լսեցի՛ք) Բայց մենք զգացինք, որ մեր միջնորդութիւնը անպտուղ կ'լինի և մեր պարտքը համարեցինք պահպանել խիստ և անկողմնասէր չեզոքութիւն, որովհետև ես հաւաստի էի, որ այս բոլորովին համաձայն էր մեր երկրի ցանկութեանցը: (Բարձրաձայն հաւանութիւն): Հեռաւոր արևելքումը նոյնպէս պատահեցան դէպքեր, որնոք կրում են շատ տխուր կերպարանք: Մեկ կողմից տեսանք չափազանց խիստ միջոցներ, որոնց նպատակն էր աշխարհս կանոնաւոր սպառազինել և ջնջումն և միւս կողմից—վճռ ժխտողութիւն, որնոր արտայայտվում է սպանութիւններով: Մենք աշխատեցանք վարվելու բոլոր լուսաւորեալ Եւրոպայի զգացմունքներին համեմատ և մանաւանդ եղանք նորա համախոհ ծանոթութիւններին. բայց, ինչպէս յայտնի է, մեր բոլոր փորձերը անյաջող եղան: Մենք կատարեցինք մեր պարտքը և մեզ մնում է միայն յոյս ունենալ, որ նոքա, որոնք վարում են Ռուսաց կայսերութեան գործքերը, կ'դադարեն վերջապէս՝ ի գործ դնելու գործողութեանց այն եղանակը, որով Եւրոպայի գատապարտութեանը ենթարկվեցան նոքա և որ խաղաղութիւնը կ'վերականգնի իրաւացի և արդար հիմանց վերայ: (Հաւանութիւն): Սրանից յետ Լորդ Պալմերստոնը համեմատեց Անգղիայի բարեբախտ դրութիւնը իր նպատակած շրջուած դէպքերի հետ և շնորհաւորեց Լորդ-Մերրին Լնդոնի զարգացուցչին ամէն կողմանէ:

«Courrier Du Dimanche» Նապոլէոն կայսեր հրաւիրական նամակների վերայ։

Մեր թղթակիցները Լոնդոնում, Վիննատում, Բերլինում և այլ. Պետերբուրգում առաւելապէս պարապած են այն նշանաւոր հաղորդակցութիւններով, որոնք Նապոլէոն կայսրը արել է Եւրոպայի միւս թագաւորներին։ Մեր ստացած տեղեկութիւնների վերայ հիմնվելով մենք կարող ենք այս մասին յետագայ մանրամասն լուրերը հաղորդել։ «կայսեր հրաւիրական նամակները խրկվել են հինգշաբթի երեկոյեան նոյեմբերի 3-ին, բացի Պապին, Ռուլթանին և ցունայ թագաւորին ուղղած նամակներից, որոնցից առաջինը խրկվել է նոյեմբերի 2-ին, իսկ մնացած երկուսը նոյեմբերի 6-ին ուրբաթ։ Բոլոր նամակները, միայն մի քանի բացառութեամբ, խրկվել են հասարակ փոստայով և ոչ թէ սուրհանդակով։ Ի զուր ասում էին, թէ այս նամակները կայսեր սեպհական ձեռքով են գրած. միայն ստորագրութիւնն է նոցա մէջ իսկական։ Կայսեր նամակներից քսանը ուղղած են մեր դեսպաններին, որոնք դանվում են յետագայ տէրութեանց մօտ, այն է, Հռոմի, Աւստրիայի, Մեծ Բրիտանիայի, Պրուսսիայի, Ռուսաստանի, Սպանիայի, Բաւարիայի, Բէլգիայի, Դանիայի, Հաննովերի, Իտալիայի, Հոլլանդիայի, Պորտուգալիայի, Սաքսոնիայի, Շվեդիայի և Նորվեգիայի, Տաճկաստանի, Վիրտեմբերգի, նոյնպէս և մեր այն դեսպաններին, որոնք գերմանիայի դաշնակցութիւնը կազմող միւս տէրութիւններում և Հելվետիայի (Շվէյցարիայի, Զուիցերիայի) հասարակապետութիւնում են գտնվում, որ նոքա հասցնեն այն նամակները, ուր հարկն է, պահպանելով ամէն պահանջված կարգերը այս մասին։

Այս նամակները ամենքն էլ միակերպ են, բացի արձանագրութիւնից, որտեղ նոցա սկզբում և վերջում է գտնվում։ Ընդհանուր նախաբանութիւնը, «եթէ այն թագաւորները, որոնք Ֆրանսիայի դաշնակիցները և բարեկամներն են, հնարաւոր կ'համարեն իրանց ներկայացութեամբ յարգել կայսեր և ժողովի մէջ եղած քննութեանց աւելի ազատութիւն տալ» և այլն. գտնվում է ամէն օրինակներում էլ, մինչև անգամ նոցա մէջ էլ, որոնք խրկած է Սուրբ Հօրը (Պապին) Անգղիայի թագուհուն, Սպանիայի թագուհուն և մինչև անգամ Սուլթանին։ Մի քանի լրագիրներ հաւկացրին, թէ այս նամակների հետ միասին խրկած են և մանրամասն ուղղառանձին խրատներ օտար տէրութեանց մէջ գտնուղ մեր դեսպաններին։ Մեր դեսպանները ստացել են միայն կայսեր նամակը և Դրուէն դէ Լիւիի համառօտ ծանուցագիրը։ Այս ծանուցագիրը պարունակում է իր մէջ միայն խրատ մեր դեսպաններին, որ սոքա աշխատեն ամէն արքունիքներուն համաձայնացնել ժողովի կայանալուն։

Մեր տեղեկութիւնները ամենևին համաձայն չեն այն տեղեկութիւնների հետ, որոնց հիման վերայ վիննայի լրագիրները ասում են, թէ Ռուսաստանի մերժումն այս մասին հաւանական է։ Մենք գիտենք, որ այսպիսի մերժումի մասին չէ եղել մինչև անգամ ոչ մի խօսակցութիւն էլ։ Անտարակոյս քաղաքական մարդիկ, որոնք վայելում են Արէքսանդր կայսեր հաւատարմութիւնը, պէտք է, ծածկէին իրանց կարծիք և չյայտնէին այն կայսեր բացակայութեան ժամանակ, որ իրանց վերայ չընդունին յետոյ պատասխանատուութիւնը, այս շատ բնական է և կարելի էր դուշակել այսպիսի զգուշութիւն Ռուսաստանի քաղաքական անձինքների կողմից։ Իսկ միւս պաշտօնատարները, որոնք ուղղակես մասնակից չեն արտաքին քաղաքականութեան, ուրեմն և ստիպված չէին աւելի զգուշութիւն պահպանել, աշխարայ յայտնում էին իրանց կարծիքը ասելով, թէ Ռուսաստանը չունի պատճառ չընդունելու Նապոլէոն կայսեր առաջարկութիւնը։ Շուտով կ'իմանանք Ռուսաստանի կառավարութեան կարծիքը պաշտօնական կերպով։

Տպաւորութիւնը, որնոր արել է վիննայի մէջ Նապոլէոն կայսեր հրաւիրական նամակը, վիննայից գրում են նոյն ըրանսիական լրագրին, «Թօրին տպաւորութիւնը, որնոր արաւ Նապոլէոն կայսեր ճառը և նորա նամակը, որով նա հրաւիրում է Աւստրիային մասնակից լինել ժողովին խորհուրդներին, դեռ էս շատ զօրեղ է և մարդոց մտքերը զբաղված են։ Հաստատուն տեղեկութիւնները, որոնք ունինք, տալիս են մեզ կարծել, որ Աւստրիան համաձայն կ'լինի ժողովի գաղափարին։ Նա աչքի առաջից կ'ունենայ միւս մեծ տէրութեանց կարծիքները և կ'հարցնէ իր դեսպանին, իշխան Միտտերնիխի ձեռքով, որնոր գարձել է Փարիզ, բացատրութիւններ այն հարցերի մասին, որոնք պէտք է առաջարկվին ժողովին վճռելու համար։ Եթէ պատասխանը գոհացուցիչ կ'լինի, Աւստրիան չի յապաղիլ մասնակից լինելու հասարակաց գործքին, եթէ միայն միւս տէրութիւններն էլ չեն մերժիլ ժողովը։ Անտարակոյս Աւստրիան չէ կարող յետ կանգնել այն ժողովից, որին մասնակից կ'լինեն Ռուսաստանը և Պրուսսիան։ Հաւանական է, որ Աւստրիան կ'պահանջէ, որ մինչև ցայժմ եղած դաշնադրութիւնները իրաւամբ չպէտք է կորցնեն իրանց զօրութիւնը մինչև այն ժամանակ, երբ նոցա պայմանների մէջ ժողովը փոփոխութիւններ կ'անէ։ Աւստրիան չէ կարող մեծ նշանակութիւն չտալ Ֆրանսիացիների կայսեր խաղաղասիրական առաջարկութեանը։

Անդղիան եւ Աւստրիան ինչ պատասխան կուտան Նապոլէոնի առաջարկութեանը: Մի գերմանական լրագրի թղթակից դրում է վիեննայից նոյեմբերի 15-ից. «Աւստրիան, որ Ալսարիայի արքունիքը առաջնակարգ շաբաթ կ'ուրկէ փաթիլ առաջին պատասխանը պետանաժողով հրաւիրելու մասին: Որովհետեւ կոմս Ռեխբերգը շատ ծանրակշիռ է համարում այն, որ նորա պատասխանը համաձայն լինի միւս երեք մեծ տէրութեանց, մանաւանդ Անգղիայի, պատասխաններին, ուստի եւ այս մասին արել էր բանակցութիւններ Անգղիայի արքունիքի հետ: Եւ յիրաւի նոցա մէջ կայացաւ կատարեալ համաձայնութիւն: Ալառաջնակարգ շաբաթ Անգղիան էլ կ'ուրկէ իր պատասխանը: Սորա բնաւորութիւն դեռ ևս յայտնի չէ. միայն հաւատացնում են, թէ Ալսարիան, յայտնելով իր համաձայնութիւնը ժողովի հաւաքվելու մասին, կ'պահանջէ նախընթաց բացատրութիւններ մի քանի հարցերի համար, այն է, ժողովի բաղկացութեան վերայ, նորա վճիռների նշանակութեանը վերայ, թէ ստացած առնելի համար անպայման ընդունելի պիտք է լինեն, թէ պայմանական եւ առհասարակ քննութեանց առարկաների վերայ: Այս բացատրութիւններից կախած կ'լինի մեր արքունիքի վերջնական վճիռը: Իսկ Անգղիան ընդհակառակն կամենում է հարցը աւելի ճիշդ եւ պարզ կերպով հասկանալ: Նախ նա կ'յայտնէ, որ ինքն համաձայն չէ, որ 1815-ի դաշնադրութիւնները ջնջված հրատարակվին եւ այս ընդունվի հիմն բանակցութեանց ժողովի մէջ: Սրանից յետոյ մտերմութեամբ կ'ցոյց տայ, որ ժողովը միայն մի քանի բանում կարող է նպաստաւորութեան հաստատութեանը եւ պահպանութեանը օգնական լինել, իսկ ուրիշ հանգամանքներում նա ընդհակառակն կ'օգնէ պատերազմի ծագելուն, որ չէ ցանկանում Ֆրանսիայի արքունիքը: Ուստի եւ անգղիական կառավարութիւնը նախընթացաբար կ'պահանջէ ժողովը կազմող անդամների գալափարից համաձայնութիւնը այն գլխաւոր հարցերի մէջ, որոնց քննութեամբ պէտք է պատրաստի ժողովը առանց մեծացած հարցերին ձեռք տալու: Այս երկու պատասխաններից էլ երեւում է, որ ոչ Ալսարիան եւ ոչ էլ Անգղիան պիտաւորութիւն ունին մասնակից լինելու ժողովրդին: Իրանց թագաւորների անձամբ ներկայ գտնվելու մասին, ոչ մի արքունիքն էլ յիշատակութիւն չէ անում: Պրուսիայի եւ Ռուսաստանի պատասխանների վերայ դեռ ոչինչ յայտնի չէ: Կարծեցը Լոնդոնի, Բերլինի եւ Ս. Պետերբուրգի պաշտօնիքների մէջ լինում են այս մասին բանակցութիւններ, որոնք դեռ ևս չեն վերջացած»:

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Մենք մեր Լաւասարջայ ամառուայ վերայ ունացել ենք շատ երեւելի հայրապետներ, միայն սրանցից շատքիչերը նշանաւոր են եղել գրականական հանդիսութեամբ, մանաւանդ այս վերջին դարերում: Եւ ահա այս քիչերի մէջ է եւ մեր այժմեան վեհափառ Տ. Մատթէոս կաթուղիկոսը, որ նոր, չնայելով իր ծերութեան հասակին եւ մարմնոյ տկարութեանը, անխոնջ աշխատում է իր պիտութիւնը ազգին վայելել տալու ազատութեան միջոցով: Վեհափառի յօրինած դէպքերը բոլորն էլ Աստուածաբանական նիւթերի վերայ են եւ առ այժմ ազատութիւնները տասներկու են թուով:

Ահա նոցա ցուցակը:

1. Խորհրդածութիւն նշանայ եւ շնորհայ եւ խորհրդոյ գրիստոսական սուրբ եկեղեցւոյ, գրաբար, յօրինեալ 'ի Զմիռնիայ Ալաջնորդութեան իւրում անդ եւ տպեալ 'ի կ. Պոլիս:

2 Նոյն աշխարհաբար թարգմանեալ 'ի պատրիարքութեան իւրում 'ի կ. Պոլիս եւ տպեալ անդ եւ 'ի Տփղիս:

3 Հանդիսարան ուղղափառութեան Հայոց եկեղեցւոյ, աշխարհաբար, յօրինեալ 'ի կ. Պոլիս եւ տպեալ անդ եւ 'ի Տփղիս:

4. Բարի մարդ եւ բարի քրիստոնեայ, աշխարհաբար, յօրինեալ 'ի կ. Պոլիս եւ տպեալ անդ եւ 'ի Տփղիս:

5. Հերքումն զրպարտիչ վայրաբանութեանց ոմանց մերազնեայց տկարամիտ անձանց, գրաբար, յօրինեալ 'ի Սուրբ Էջմիածին եւ տպեալ 'ի Մոսկուայ:

6. Ծանօթութիւն 'ի վերայ մասանց, աշխարհաբար, յօրինեալ 'ի սուրբ Էջմիածին եւ տպեալ անդ:

7. Հաստատութիւն ուսուցութեան դաշանց թղթոյ, աշխարհաբար, յօրինեալ 'ի սուրբ Էջմիածին եւ տպեալ 'ի Մոսկուայ:

8. Հայելի Աստուածային շնորհայ, գրաբար, յօրինեալ 'ի սուրբ Էջմիածին եւ տպեալ 'ի Տրիխիա:

9. Ուղղեցոյց գրիստոնէական ուղղափառ Հաւատոյ, գրաբար, յօրինեալ 'ի սուրբ Էջմիածին եւ տպեալ 'ի Մոսկուայ:

10. Ներածութիւն Աստուածաբանական դիտելեաց, գրաբար, յօրինեալ 'ի սուրբ Էջմիածին եւ տպեալ 'ի Շուշի քաղաքի:

11. Սիաբանութիւն պատարագին մեկնութեան խորհրդոց սուրբ պատարագին, հեղինակեալ 'ի գաբրիէլ վարդապետէ Ալվազեան, յօրինեալ 'ի սուրբ Էջմիածին եւ տպեալ անդ:

12· Ա.ռաջնորդ կենաց յաւիտենական ճանապարհին, դրաբար, յօրինեալ՝ ի Տփղիս և տպագրի արդէն ի սուրբ Էջմիածին:

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԱՅ

ԵՐԻՏԱՍԱՐԴՔ ԵՒ ՊԱՏԱՆԻՔ

Նոր Նախիջևան քաղաքը, որ շատ տարի յետ էր մնացած իւր ազգարժան յառաջադիմութիւններէն, այժմեան լուսաւորուած և հայրենասէր կառավարչաց օժանդակութեամբ սկսել է ընդհատել նոր նոր շառաւիղները ազգասիրական հանդիսից: Եւ հասարակութեան միջև ընտրելագոյն անդամք, քաղաքի զանազան թերութիւններն և թիւրութիւններն իրանց սեփական վարկանելով՝ ջանացիր են անձնուրաց ճգնութեամբ փոքր փոքր քաղել փուշը և տատասկը և տեղը անկել շուշան և այլ քաղցրահոտ ծաղկունք:

Թեպէտ հին և մաշուած խօսք է այս, թէ «երանի հասարակութեան, զոր կամ իմաստունք կառավարեսցին, կամ որոյ կառավարիչք իմաստասիրեսցին». բայց մեր օրերը ցոյց են տալիս մեզ ստոյգ ճշմարտութիւն, երբ որ այժմեան բարեկարգ, բարեմիտ և բարեսէր կառավարչաց ձեռքով նոր Նախիջևան քաղաքի մէջ մրցնում է սէր ազգութեան, որ մինչև մեր տեսած ժամանակները կամ մեր ծնողաց կենդանութեան միջոցները չէին ուրեք երևում: Հասարակութեան իւրաքանչիւր համակարգութեան մէջ տեսնվում է նոր ազգասիրութիւն, կամ լաւ ևս՝ մարդասիրութեան նշան: Շատերին մէկին ստորագրենք:

Ջմեռնային յորդրը և ձիւնը աւելի սաստիկ լինեով 1860 թուի սկիզբը, անհնարին դարձուցին աղքատաց գանձապետի օգնութիւնը ամեն կարօտելոց բաւականացնելը: Մէկ քանի չքաւորք հկան իրանց պահպանութիւնը յայտնելին մեծ վաճառանոցի (Պեզեստէնի) մէջ: Վաճառանոցի կրպակաւոր երիտասարդք և պահանի խանութպանք չըսպասեցին, որ այն չքաւորները հասնին մինչև աղքատաց գանձապետի դուռը, այլ իրանք ինքնայօժար ոչ թէ միայն այն չքաւորներին տուին բաւականութիւն, այլ և ընկան քաղաքի մէջ որոնել և գտնել այնպիսի դէրդաստաններ, որ զարձել ոչ կարելով և մուրալ ամաչելով՝ ճնացած կը լինէին վշտաց մէջ անկելով: Գտան ոչ մէկ կամ երկուսը, այլ բազմաթիւ և իրանց օգնութիւնը հասուցին:

Ա.յս մանաւոր բարերարութիւնը վարթայդ նոցա սրտի մէջ մէկ այլ իղձ և սէր· հաստատեցին իրանց մէջ մէկ մանաւոր գանձանակ «Ա.յցելութիւն չքաւորաց» անուանով և սկսան այս գանձանակի մէջ ամէն ամիս փող հանգանակել, իւրաքանչիւր անձն 25 կոպէկ, որ տարին կանէ 3 մանէթ. գանձանակ փոքրիկ և նուէրը սակաւ, բայց տեսնելէ կամ հարիւր հոգի, երբ որ սկսեն այս փոքրիկ նուէրքը բերել՝ որքան կըգոյանայ:

1860 Օգոստոսի ամսին, յետ բազմապիմի ծախուց, որ արել էին ի պէտս օգնութեան չքաւորաց, բայց այցելութեան դրամագլուխը աւելի եր քան զՀազար մանէթ, որի իրանց մէջ ածելնելու և անկորուստ պահելու հոգսն ու գաղաքական կառավարչութեան անօրինութեանց ստորագրելու հոգսն անդուլ ուենէին: Այն բարեաւ և ազգասէր երիտասարդաց և պատանեկաց մէջէն միայն մէկի անունը պահած ունիմ մտքիս մէջ, որ է՝ Պետրոս Յակոբեան Մուրատչեանց:

Պատճառս եմ որ «Հիւսիս» լրագիրը, նման այլոց հայկաղնեայ հայրենասիրական անկողմնասէր լրագրաց՝ «Ասուն կի», «Մեղուի Հայաստանի», և այլն, և այլն, իւր ազգասէր դիրքը, իւր անձնազոհ ճիգը և իւր անախտակիր դիտաւորութիւնը կամ նպատակը ուենենալով նուիրեալ աղի բարեաց և արդի ազգապարծանք դործոց, իւր թերթերու մէջ բարեհաճի տեղ տալ այս համառօտագիծ տեղեկութեան, և ես իմ կողմանէ սեպուհ պարտաւորութիւն կըհամարիմ միւս թերթերու մէջ ևս խնդրել սորա ծնացորդ հանգամանաց ընդունելութիւն, ուստի քաջայայտ պիտի եղիւ այն այցելութեան չքաւորաց միւս գործերն ևս, որոյ անդամակցայ անմոռանալի և ոսկեզէն տառերով գրելի անուննները և այլ պարագաները մոռացած լինելով այժմ իմ վրայ հարկ է ինձմ յայտագային հատուցանել ի գիտութիւն և ի զուարճութիւն ազգասիրաց:

Բաժանորդ «Հիւսիս» Լրագրի:

Մենք պատիւ ունեցանք Մեղուի միջոցով յայտնել մեր յարգոյ ընթերցողներին, որ նոյեմբերումն սկսվել է Ս. Պետերբուրգումն մի նոր Հայ պարբերական հրատարակութիւն և որ ցանկացողը կարող է ստորագրվիլ յիշեալ լրագրին Պ. Յովսէփեանցի մօտ, Շիայեվի դուքանները, Պրօսպեկտի վերայ: Ա.յժմ յայտնումենք, որ ով կ'կամենայ նախընթացաբար ծանօթանալ այն լրագրի ուղղութեանը, կարող է նոյն պարոնի մօտ առնալ նորա ամէն մէկ թերթը առանձին առանձին, վճարելով իւրաքանչիւր թուահամարի համար 20 կոպ. արծաթ:

ԳԱԽՕՐՅԻ

Գարեաղ Ղազոյի մասլահաթի կիսատը.

Ինչմէ՞ն է, կոյս, վուր մեր հայերը, էս հազար չուրա հարուր, հազար հինգ հարուր տարի առաջ էլած

հարը հիմի հհինց ամէն տիղ իշվում ին ու միր պարծանքն ին դառի. ինչումէ՞ն էր, վուր նըրանք իրանց հաւտի բանիրն էլ լաւ գիդէին: Թէ մարթ, Թէ կընիկ վըայ էին գընում իրանց հաւտի դուշմներու վըրայ, արուն էին վիրթում, հազարներով կատրվում էին, նահատակվում էին: Ինչումէ՞ն էր, վուր Վարթան Մամիկոնեանի պէս մարթիք էին դուս գալի էն վախտը: Էնդումէն էր, կօսէ, վուր էն ժուգը միր իրդրումը մի մինձ ուսումարանիր շատ էլի ու մինձն էլ պըրոպաիկն էլ մէ խօսկով գիսուռնըը սորվելու էդնէն ին էլ: Աբա նրանք էն սորվիլը չէին ուզում, Թէ հնհնց փախակալի գընայիլ էին իրանց հաւտի դուշմնի վրայ.. ն ուսումի զօռն է էլի, ուրիշ վընչիչ: Թէ նրանք հնհնց չէին էլի հադրած, գուշմանը գուբէր ու գիսի միանայ տակն ու վրայ կօնէր նրանց տունն էլ տիղն էլ կուլի վըր իրանց հաւտան էլ կորցըրիլ էին, կօսէ, վընզոր շատ անգիդում ասկիրը կորցըրիլ ին ու գնդնի յիդ ին հաւտըրվի: Դուշմնի յիդ կըռվելիս մեռնում ին էլի նըրանք, իրանց մեռնելվի տակն ին էլի կենդանացնում, վուտի վրայ կանգնեցնում: Նրանց վիրաձ արունը, կօսիս Թէ մհկհլ հաերու, դ ամարն էր մրանում ու աւելի ուժ ու զօրութին տալի նըրանց կրռներուն, նրանց սըրտին ու նրանց հոգուն: Էս դիսի ուսումնիմէն էր, կօսէ, էն ժուգվայ միմինձ ուսումարաններիմէն:

Հիմի էլ Թէ գուգընք, վըր միր անումը նրանց պէս հազար տարերով իշվի աշխարհի վրայ, նրանց օրինակին պիտինք մրտիկ տայ, նրանց պէս միմինձ ուսումարաններ պիտինք ունենայ, Թէ աշխարհականներու համար ու Թէ հոգևորականներու համար: Աբա վ՞ընդիէ հա, Աստուձ տայ, վուր միր հիմիկվայ Հոգևոր—Տէրը սարքէ հոգևորականներու համար էլայ մէ մինձ ուսումարան: Միր Մաշտոցի համար ասում ին, Թէ ասկի ու հաւտի համար, կօսէ, զիմի կանգնած է. Աստուձ աւելի կարօղութին տայ դընան: Ամմա, իսիր միձ ուսումարանը կուլի, միր Հոգևոր—Տիրուչ քամանդնիրն էլ կու աւելնան, (հիմի խիստ քիչ ին, կօսէ, նրա քամանդնիրը) գիդնաուր ու խելօք մարթիքը վուր կու շատանան, ամէն բանն էլ լաւ կիհայ . . . . . .

Ասկը հալիր է միր Հոգևոր—Տէր, միր Տէր, միր Սինձ, մէ էտ Թահար լաւութին արա՛ միզ, ուրիշ վընչ չիչ չինք ուզի քիզմէն: Մէ կամաւորվի, մէ սըրտալի ձևը տուր բանին. իմաստ մէկը չէ ու տասն էտ Թահար ուսումարաններիր կու շինի միր խաչիրը: Ասկի ու հաւտի համար լաւ բան ըլի, դուն էտ ասա. ի՞նչ—հալ բաթի մինք էլ բանականութին ունինք, ինչոր ձեռնարկումէս գուքայ, մէ խօսկով վընչիչ չինք կնանախ: Աստուձ, մեռնիմ նրա օղորմութէնին, նրա փիշը բըռնինք զամ ու միզ էլ կու աչքայ ու միր Հոգևոր—Տիրուչն էլ ու չուստ Մաթէոսի մինձ ուսումարանն էլ կունենանք:

Էլախտ ասինք, Թէ միր գահաներուն կարքի գըցելու համար պիտի վըր նրանց համար ամընդունիր սարքինք: Տանդուղը հիմիկվայ գահաներուն քիչ Թէ շատ կու լաւացնէ ու իժուում Մաթէոսի մինձ ուսումարանն դուս էկած գահաներու համար էլ կուլի: Էն վախտը գիդիք, կօսէ, մէ իրկայցուն քանի տարի պիտի սորվի՝ հինգ, վից տարի էսգանցի Ներսէսի շկոլումը. իժում չուրս հինգ տարի էլ մինձ ուսումարանում. էտ քիչ 10 11 տարի, էտղըդամի չարչարանքը վըր կու քաշին նրբանք, դըռրը Թամամ անելու էդնէն անպատճառ առնդուղ պիտին ունենայ, վըր համ ամադներուն աժում ըլի ու համ էլ իրանց լաիղ բան շինին: Ուսումն է կունենան էն իրկցնիրը, փուշն է կունենան. էնդի էլ ի՞նչ է մընում՝ ասկը, ասկի համա չալիշ գալը, ժողովուրթի խրատիլը, աշկըրանիր սորվեցնիլը, գրիլն ու պըպիլը:

Հիմի էլ կի մընամ, վըր առնդուղը շատ լաւ ըլի խալխի համա էլ ու գահաներու համա էլ: Փիքը անինք, ախպէր, տեհնինք, միր բանը չէ. վունցոր ձեռք տայ միզ, էնհնց բըռնինք բանը: Էս փուշն է—միրն է, գահանէքն ին—միրն ին. ջհ, մինք էլ խիլք խիլքի տանք, մէ բան գարսինք: Թէ խէյրաթ բան ըլի միր իրկցներու համա առնդուղ սարքինն ու միզ համա էլ ճանդրութին չըլի, խօմ ի՞նչ լաւ. սարքինք, տեսնինք մէ քանի տարի, փորցինք, Թէ լաւ չի ըլի—էլի միր ձեռքն չէ. էս ծէրն էլ միր ձեռնին է ու էն ծէրն էլ:

Էս մօդիկ ժուգերուն իս իմացայ, կօսէ, մէ տիղ խօսում էին Թէ, միԹամ միր Հոգևոր—Տէրն ուզում է միր գահաներու համա առնդուղ նըշնէ: Գահաներուն գըրիլ է, կօսէ, վուր չուստ խաբար անին նըրան, Թէ օվ քանի տուն ժողովուրթի ունէ, օ՞վքիր ին նրանք: Հրամանք է արի, վուր նրանց անումնիրն ու ասկիրն էլ մէ գաւԹըռումը գըրին ու տանին կանցիստորը: Աֆսոս, էս միր Հոգևոր—Տէրն ի՞նչ լաւ տիղերումն է կըցում բանն էլ, ի՞նչ չուստ էլ իմացիլ է բանի վուրպէսութինն էլ: Իմաստուն մարթ ին ասում Նրա համա, ջէր ա՛ուր իա, էլի շատ էտ Թահար Նրա լաւ լաւ բանիրը կու իմանանք մինք: Աստուձ երգար կինք տայ նըրան, Նրա մէ օրը հազար շինէ, վուր միր հազար Թահար գարգին գարման անէ: ԿաԹուղիկուսներուս միզ համա լաւ բան է փիքը արի. էլ ինչի՞ն ինք մըտիկ տալի մինք, մինք էլ քամագ ըլինք ջ. . . վուրը նա կուլի, վուրը մինք կուլինք, կհհայ ու բանը բան կու գառնայ:

Օ՞վ չի գիդի, օ՞վ չէ տեսնում, վուր հիմի միր գա-

հաներու վուղ մօգ անելու դայդէն խիսա անկարք դայ-
դա է. էնդու համա էլ էսղըդայ ղալմաղլիր է պուս գա-
լի: Վո՞ւրն ասէ մարթ . . .

Լա՛ւ հիմի էս ի՞նչ-մէն է, վուր էհէնց ին անուշ
միր իրիցնիրը: Հալբաթ, էնդուն է, վուր խիճա՛ին,
չունին. չունեուրնէն արմընելու չէ վուր էտ հանգի
բանիր անէ: Բա՛ ի՞նչ անին, քախցած խօմ չի՞ն կա-
նայ կինայ: Էտուն կին, իս ու իմ Աստուձը, վուր ղը-
նամիշ անելու չին: Իժուժ մէ մէ նավս տընիր էլ վուր
ըլում է. տասը քսան տարի անց է կենուում, էն աղբա-
թըխէրնիրը վունց մեռնում ին, վունց նըշանովէք ու-
նին ու վունց փըսակ, կընքվատէքն էլ խօմ օ՞վ կու-
տայ: Հիմի ձիշ իմ հարցընուում, մէ քսան տարվայ էղ-
նէն, վուր էն տանը մէ փըսակ պատահի, հախը չի՞ վու՛ր
էնքան տարվայ ջիզրը դիփ մէտի հանէ տանու դա-
հանէն—համան է, ախպէր, համան է. էտուն ի՞նչ խօս կ
ունէ ու թէ անուում ին էլ բաս չէ ու միր սորվեցնե-
լուն ին մընո՛ւմ. . .

Ուհաին ասին, թէ կոզակըտ Ծուռն է—ի՞նչս է դը-
րուստ, կօսէ, վուր էս ըլի դրուստ: Բարաքա՛լլայ ուխտ,
վուր էտէնց դրուստ ջուղար իս տրվի: Իրիցներուն
վուր տասում իս, թէ տէրտէր, լաւ չիքանուում, էտէնց չը
պիտի.—խիսա լաւ ինք անուում, կօսէ, թէ չիք հաւնուում,
էկէ՛ք դուք դառէք գահանայ: Ի՞նչ ջուղար տաս:
Էտ իրանց ուսման պակասութին է տէնց խօսեցնուում
նըրանց: Էս տոնլուղ սարքելու բանումը կի մինք էն
ումիկով լինք, վուր միր շէն գահանէքը չին խառնի բանը.
իրանք էլ կու չալիշ գան, չին ասի, թէ մինք էտէնց
չինք ուզի, ինչի՞ իք հացեներուս խըլուում, ձիշ ի՞նչ...

Էս կարք է՞, օրէնք է՞, դատաստան է՞, վուր հիմի մէ
գահանէն 200 տուն ժողօուրթ ունէ, մէկէլը՝ 50,
մէկը՝ 100, մէկէլը՝ 20, էտ վո՞ւրպանցի է ախար: Սա-
ւաի էտուրը մէ գահանէն դիփ ջոգովի հարուստ տը-
նիրն ունէ զաւթած, դիփ չայիրը. մէկէլին կի վուրդի
խիճա՛ ու ախկատ օջախնիր կայ էնդունք ին տրվի:
Մէ մէ հեսաի նայար—բնչար արած տընիր ունին միր
վուրն ու վուր գահանէքը, վուր պիրիքիթ գահանէն
պիտի տայ նըրանց փուղ,—հառամ չի ըլի նրանց տը-
ված փուղը՞: Լա՛ւ, հիմի միզի միզ ասինք, թէ վո՞ւր
օրէնքուն է դըրած էս բանը, վուր դուն տանուտօխտը
թահար կերակրիր ուտիս ամէն օր ու քու մէկէլ նրնա-
դիրը կի, վուր քու բարեբար մարթ է, մէ դրուստ ցա-
մաք հաց էլ դըժար ըլի ճարուում իր օղլուշաղի հա-
մա: Թէ կօսին, թէ մինք մինձ տէրտէր ինք, մինձ ու-
տիլ խըմիլ էլ պիտինք ունէնայ, միզ աւելի կու նըն-
դնի: Էլի թո՛ղ աւելի նընդնի, օ՞վ ինչ է ասում, ամա՛
էտէնց էլ զըրնիլ կուլի խըխաճերուն: Աւաչի Աստու,
միևկ ին էն խըխաճընիրն էլ. նրանք լեզու չունին, վուր
խօսին, ասին վուրդիր հարկատուր է, ամա՛ ինչկլի ի՞մ
պիտին տանջըվի նըրանք: Գահանէն գահանայ է, դիփ
էլ մէկին միզ համա, ամէն գահանէն մինձ է: Զէր մէ
էն հարցընիս, թէ ո՞ւմ օրինակիք գուք, մինձ տէր-
տէրնիր.—Քրիստուսինը.—Լաւ, իժուում քանի՞ Քրիս-
տուս է էլի գանա, մինձ Քրիստուս էլ էլիլ ի՞. վուր նրա
օրինակ ըլին նըրսո՞նք.—չէ՛.—Քրիստուսը մէկ է էլի
ու էն էլ մինձուրթին չը սիրուղ խոնար.—բաս ո՞ւմ օ-
րինակ ին ղըրանք . . .

Թէ կօսին, թէ էն մէկէլ գահանէքն ի՞նչ գահա-
նէք ին, վուր միզ պէս շատ ու լաւ ժողօուրթ ունե-
նան: Լաւ, թէ նըրանք, էն մէկէլ գահանէքը վունչի՛չ
գահանէք ին, էլ ո՞ւր ին օխնուում նըրանց, վուր օխնըվիլ
է, գահանայ է դառի, ապրուստ էլ պիտի ունենայ, է-
տուն ի՞նչ խօսկ ունին: Գուղին, աւաղակին բըռ-
նուում ին ցիմբիր ին ղըրդուում, ամա՛ էնդի տալիս ին, կօ-
սէ, նըրանցը տուն, սիղ, երկու իրիք կով. մէ
քանի օխչար, ու փուղ էլ ին տալի առչի դամօ-
քը, վուր տուն ու սիղ դառնան, բանի կանդնին: Բաս
վո՞ւնց դիդիք: Իս հենց դիդէի, թէ ղըրթի ումնոր
ցիմբիրն ին ղըրդուում, էնդիւէվէտ սըպանուում ին, միր
ամէկումն հիւռացնուում ին, տանուում ին, էնդի ին բաթ-
միշ անուում: Ամա՛ բանն էտէնց չէ էլի, իմ վուրթին
յիդ ասաւ ինձ էտ էլ: Քանի՞ էտ թահար բանիր կայ,
վուր մինք միր թահարն ին իմանուում, ծուռը, սրղալ:
քանի՞ դիդնատուր մարթիք պիտին ըլի միր քախկու-
մը, վուր սորվեցնին խալխին, նրանց ծուռը դրըստին,
էն ամէկով մրտիկ տալ տան ամէն բանին, վունցոր պիտի:

Ի՞նչ հալուժն ին, ինչ ապրելուժն ին միր հիմիկվայ
մէ քանի գահանէքը . . . Դըժար է, ախպէր, օվոր գու-
զէ ըլի, դըժար կու դիմնայ էն նիղուրթէնին, էն խըխա-
ճուրթէնին, վուր մէքանիսը քաշուում ին: Հիմի էս լաւ է,
վուր միր խիճա՛ գահանէքը մէ մէ հեսաի ձոնձերով
ին ման գալի քախկումը, վուր մարթ ամանչում էլ է
նրանց յիդ հանգիրելիս. մէկէլնիրը կի, քու արիվը դի-
դնայ, հեսաի թահար ռանդիդիդար ատլաս ու ան-
տիկմուայ փարաջերով ին ըլում դուքաճ, վուր աճկ
պիտի, վուր նըրանց ղըքսին մրտիկ տայ: Վունց էս է
լաւ, վունց էն: Վունց դըջըլտաճ ու ճոթըռատաճ պի-
տին ման գայ ու վունց էլ ղուքաճ ու ղըլպըլտաճ նո-
թահարսի պէս: Վունց խիսա կէճ ջուրն է պէտկ ու
վունց էլ խիսա սառը. էնդումն է հու երիս ձեռըտ,
էնդումն էլ: Թէ գուղիս, վուր չէրվէս, կէճն ու սառը
խառնէ մէտի. ջըրի ղուչը կու կոտրըվի, վունց խիսա
տաք կուլի, վունց էլ սառը, էնդումն իժուժ մարթ ձե-
ռը չի էրի: Էնհէնց է՞, թէ չէ: Հանաքը դէնը կինայ ո-
ինչի՞ պիտի միր մէ քանի գահանէքն իրանց ծըրնմէն
դուս հարըստութինով ու մէկէլնիրն էլ իրանց յիդին

ախրատուբեանով միշ ամանչեցնին: Թէ վուր ձեռըտ ան խիատ կէճ ջուրը դընիս ու ան կարիըտի պէս սառ ըը ջըրուտը կու էրվի՝ բաս միր սիրտը չը պիտի էրվի միր խիլճ գահանէրու հաչը ու ափսոսը տեսնելով ան խամանալով: Շատը սաղ ձըմիան էնէնց անց է կացնուտ, ցըրտուտը վընդվընգալով, վուր հինդ վից ամըսվայ մէ չը մ սէլ փէտի փուղ չինի կանացի չիտ գըցի, ուրիշ էլ վընան ասիտ.—չինք գիլի՝ չինք խմացի՝: Չէ վուր առաար մինք տեսնուտ ինք էստուն, գիլինք էլ վուր լաւ չէ, ճար անիլն էլ միր ձեռ չին է. ինչի՞ մէ էնէնց բան չը պիտինք անի, վուր վընց թաքառը—գահանէք ու նենանք ու վընց էլ չլես քեսիր—իրիցիվր: Դիփուն քըն օրինառը ու լաղաթի շուրիր հաքնին, էնէնց վընցոր իրանց կու առ գայ ու կու վախէ: Միր անէրտն ի՞նչն է: Էն վուր միաբերան խնդրինք միր Հոքէուր—Տիրուչին, ան իփոր նա հատի չի ըլի, հազանցի Աստուծ նուրթին, վուր տունուզնիր առրքին միր իրիցներու հա մա: Կուլի մէ քանիան ասին, թէ իրիցներն իրանց ի բանց թոռ կարքի դըցին իրանց, իրանց իրանց բարե բըրվին: Միր շէն տէրտէրներու անդճուտն ասա՝ էտ խօսկիրր: Ար՛ա իսկի խիլքի մօտիկ բան է նրանց հա մա՞..ինչիր ի՞ք կարթուտ: Ներանք խօտ ունին ու ունին դիփ Ջուռվի ժողօուրթի, էն խիլճ գահանէրու ժո ղօուրթուտն էլ վուր տեսնուտ ին մէ ամկուտը լուս ու նէցող տուն, օջախ, հնդըգայ չտիշ ին գալի, հնդըգայ անուտ ին. վուր էն մէ տունն էլ իրանց կուտն ին դը ցուտ: Էն խիլճ գահանէքն էլ ի՞նչ կանան անի, նը բանց ձեռնեմէն ի՞նչ կու դուտ գայ: Էնդըգայ էջիան, վուր վուրդիոր տիղն է էնգի լաթար տան, էնգի տըն իրանց գանկաչնիրը—ան իրանց տանն ին մէնակ քընթի տակը փընթփընթուտ, իրանց տիրացուէրու մօտ բայ ըլուտ, ան թէ չէ դընուտ ին իրանց աւաք գահանէրուն ին գանկարվուտ. վուր միտամ նրանը դընան ու նըրանց համա բարեխոսութին անին մինձի մօտ: Խիլք չէ, ի՞նչ է... Էնդըգամի չէն փիքր անուտ. թէ ախար օրանցը վուր ասուտ ինք, միշ պես քահցած խօտ չէ՞ն, վուր գընան չուտա միր ցաւին դիղ ու դարման անին. էն չէ՞ն իմացի, թէ կուշտը քահցածին ծանդըր կու բըրթէ կօտ: Աբա ան ի՞նչ խէյրաթ բան է, վուր գընայ, քիղ համա խօսի, իրանը խըլին ու քիղ տան: Իր տունը կու քանդէ՞ ու քու տունը կու շինէ՞: Նէնց հալալ—մա լալ գահանէք էլ շատ կան: Դիփ ամէն բանն էն մինձ ուսումարանը կու դրըտէ ու իրիցներու տնդուզն էլ թէ վրայ կու բերինք, քիչ քիչ կու բարերբերնէ միր չէն ու խիլճ գահանէրուն:

Միր Հոքէուր—Տէրը լաւ է կըցի բանը. մինք էլ էնէնց էինք փիքր արի: Լաւ կըցին էլ լաւ բան է: Բաս թէ էտենց միր հանդիպ է ուզուտ. Նա բան բըռնի, մինք էլ դաբուլ լինք, ախպէր, ինչոր ասէ, մինք խօսկումն չիտ կանդնողը չինք: Ա՛յ ի՞նչ թահարն է ուզուտ միր Հոքէուր—Տէրն, ասիտ ձիդ: Ջեր հիմիկ վայ միր գահանէրումն ուզուտ էմանայ, թէ օ՞վ ինչ ժողօուրթի ունէ, օ՞վ ինչ: Ի՞նչ կօնէ հատնք: Լսում կու իմանայ, թէ միր քախուտը ի՞նչըզպամի հատ տուն կայ ու օ՞վքիր ին նըրանք: Սաւաի հատուրը, գա հանէքն էն գաւթըմներուտը պիտին գըցի, թէ փլան ժողօուրթը տալիս է տընօխնէք 3 մանէթ, փլանը՝ 1 մանէթ՝ սա էրիու աբասի, նա մէ աբասի, մէկն էրկու շաի ու մէկկը մէ շաի: Էտ գաւթըմնիրը կու տանին կանցիատորը: Ի՞նչի համա է հարկաւր էտունք: Էն գու համա, վուր խալխի ջոգ ջգողն օրինառը, անը պուղ ջոգ ջգնէ: Տնտուզ վուր կու սարքվի, ամէն օ ջախ խօտ մէ թահար տնտուզ չի տայ իրանց տանու գահանին, չի՞. —շատ ունեցողը, շատ տընօխնէք տը վողը՝ շատ տնտուզ կուտայ, քիչ ունեցողը՝ քիչ: Ժո ղօուրթի շատ ու քիչ ունենալն ինչո՞վ կու իմանայ— էն գաւթըմներով: Իրիք մանէթ տընօխնէք տրվողը խիատ շէնն է, նրա տալու տունուզն էլ շատ կուլի. մէ մանէթ տընօխնէք տրվողը նրանէն պակաս տունուզ կու տայ իրիցին. էրկու աբասի տրվող՝ նրանէն քիչ. մէ խօսկով էհէնց կարգով կուլի բանը, սանդուխա—սան դուխա: Էնէնց պիտի ըլի տունուզնիրը, վուր ժողօուր թըն ու գահանէքը մէկ մէկով հալա գընան, վընց իրիցներու հախը կըարլին ու վընց էլ խալխը ղըրնին:

(Ջէր էլի կայ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ·

Ռուսուհիչ կօլլեժսկի Ասեսօր Իվան Տրիֆոնովիչ Խը լամովը բաց է արել Տղերքանց պանսիօն թիֆ լիզում. Սոլոլակի Թաղումը Արաբ օղլու տանը:

Պանսիօնի ուսման ընթացքը նոյն է, ինչ որ սահ մանած է Գիմնազիոյ առաջին չորս դասատանց հա մար: Ռուսուհատուուքեան ձեւն է նիատողական և հա մեմատարար վայելուչ կրթութեան և մուտր զար գացման պահանջմանցը:

Պանսիօնի տեսչը հաստատուն յոյս ունի, որ նրա պանսիօնը իրա ուղղութեամբը լիովին կ'կատարէ ծը նողաց ցանկութիւնը:

Կոլեժսկի Ասեսօր Իվան Խամով:

Հրատարակիչ Հ. ԷՆՓԻԱՃԵԱՆՑ (Ի ՏՊԱՐԱՆԻ Գ. Ա ԵԼԲՈՒԻՄԵԱՆ
Խմբագիր պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ: (Հ. ԷՆՓԻԱՃԵԱՆՑ:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ. 30 ноября 1863 г.
ТИФЛИСЪ